ՔԱՂՎԱԾՔ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի
2024 թվականի հունիսի 24-ի՝ հարցման կարգով նիստի
N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Խաչատուրի Մարկոսյանի**, տնտեսագիտության թեկնածու **Էլյանորա Նորայրի Մաթևոսյանի**, տնտեսագիտության թեկնածու **Մերուժան Աշոտի Մարկոսյանի** և տնտեսագիտության թեկնածու **Արմեն Աշոտի Մարկոսյանի «Տնտեսական անվտանգություն» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու** մասին հարցը (հրատարակության է երաշխավորել մակրոէկոնոմիկայի ամբիոնը):

Հրատարակության ներկայացված ուսումնամեթոդական ձեռնարկը նվիրված է պետության ազգային անվտանգության միջուկի՝ տնտեսական անվտանգության և մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնահարցին: Քննարկվել են տնտեսական անվտանգությանը վերաբերող համալիր այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են տնտեսական անվտանգության հասկացությունը, նրա տեղն ու նշանակությունը ազգային անվտանգության համակարգում, տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման մակրոտնտեսական ցուցանիշների շրջանակը, այդ ցուցանիշների շեմային մեծությունների ընտրության մոտեցումները: Ձեռնարկում առաջարկված է տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման հեղինակային փորձարկված մեթոդաբանություն, որի օգնությամբ քանակական չափման է ենթարկվում պետության, պետությունների խմբի, ինչպես նաև տնտեսական միության կազմի մեջ մտնող երկրների տնտեսական անվտանգությունը ինչպես բալային միավորների, այնպես էլ մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա կազմված մատրիցի օգնությամբ: Ձեռնարկը նախատեսված է «Տնտեսության պետական կարգավորում» և «Հանրային կառավարում» մագիստրոսի կրթական ծրագրերում ներառված «Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնահարցեր» և «Ազգային անվտանգության հիմնահարցեր» դասընթացների դասավանդման, ինչպես նաև տնտեսական անվտանգության հիմնահարցերով հետաքրքրվող ակադեմիական կազմի, ասպիրանտների ու հայցորդների, հետազոտողների, ուսանողների, տնտեսագիտական կրթություն ունեցողների, օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների ու գործարարների համար:

Ուսումնամեթոդական ձեռնարկն ուղարկվել է 2 արտաքին անանուն («կույր») գրախոսության և 2 գրախոս փորձագետների կողմից ստացվել են դրական եզրակացություններ:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել են նաև երկու ներքին գրախոսների դրական կարծիքներ.

1. Թաթուլ Մելսիկի Մկրտչյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

2. Սոս Վիրաբի Խաչիկյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

Ուսումնական ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել մակրոէկոնոմիկայի ամբիոնի 2024 թվականի ապրիլի 23-ի նիստում (արձանագրություն N 9) և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 3-ի, ժամը 13:30-ի նիստում (արձանագրություն N 32):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով 2 արտաքին անանուն («կույր») գրախոս փորձագետների դրական եզրակացությունները, երկու ներքին գրախոսների դրական կարծիքները, մակրոէկոնոմիկայի ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Խաչատուրի Մարկոսյանի**, տնտեսագիտության թեկնածու **Էլյանորա Նորայրի Մաթևոսյանի**, տնտեսագիտության թեկնածու **Մերուժան Աշոտի Մարկոսյանի** և տնտեսագիտության թեկնածու **Արմեն Աշոտի Մարկոսյանի «Տնտեսական անվտանգություն» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության՝ 250 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում** (նախատեսված է հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով):

Սահմանված ժամկետում (ժամը 9:00-ից մինչև 17:30-ն ընկած ժամանակահատվածում) հարցման կարգով նիստի օրակարգային հարցի քննարկմանն ու քվեարկությանը գիտական խորհրդի 60 անդամից մասնակցեցին 54-ը: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Հ. Կարապետյան**

2024 թ. հունիսի 24
Երևան